ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

§ 8. ՀԻՆ ՄԻՋԱԳԵՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

1

Միջագետքում պապիրուս չի աճում և գրելու միջոց ծառայում էր կավը: Փայտե տախտակի վրա բարակ շերտով կավ էին քսում և վրան գրում: Չորանալուց հետո կավի շերտը տախտակից պոկում էին և ստացվում էր գրված տեքստով կավե սալիկ: Տեքստերը պահպանելու համար սալիկները կրակով թրծում էին: Գրում էին եղեգից պատրաստված գրչով, իսկ չորացած եղեգը եռանկյան՝ սեպի ձև է ստանում, ահա ինչու գրի այդ տեսակը կոչվում էր սեպագիր:

Դպրոցը անվանում էին «սալիկների տուն»: Այն ղեկավարում էր «սալիկների տան հայրը», որը հիմնական ուսուցիչն էր: Կային նաև ուսուցչի օգնականներ և հատուկ վերակացու՝ «ճիպոտին տիրապետողը»: Ծույլ և չարաճճի սովորողների նկատմամբ կիրառվում էին մարմնական պատիժներ: Սովորեցնում էին գրել – կարդալ շումերերեն և աքքադերեն, մաթեմատիկա, աշխարհագրություն, բնագիտություն, կազմել ապրանքացուցակներ, առք ու վաճառքի պայմանագրեր: Պեղումներից հայտնաբերվել են պետական և մասնավոր գրադարաններ: Նինվեի պեղումներից գտնվել է Ասորեստանի արքա Աշուրբանապալի գրադարանը, որտեղ պահվում էր սալիկների վրա գրված 20000 գիրք:

Գրական ստեղծագործության նմուշներից է ***Ջրհեղեղի մասին*** առասպելը: Միջագետքում գետերի վարարումների և անձրևների հետևանքով ջրհեղեղները հաճախակի էին: Երբեմն այն ծածկում էր Շումերի ողջ տարածքը, և մարդկանց թվում էր, թե ջուրը ծածկել է աշխարհը: Առասպելը շումերներից անցել է մյուս ժողովուրդներին և տեղ է գտել Աստվածաշնչում:

Առասպելում պատմվում է, որ, զայրանալով մարդկանց վրա անհավատության համար, աստվածները որոշում են ոչնչացնել մարդկությունը: Սակայն Էնկի աստվածը այդ մասին հայտնում է աստվածավախ Ուտնափիշտիմին և խորհուրդ տալիս ինչպես փրկվել: Ուտնափիշտիմը տապան է կառուցում, վերցնում է իր ընտանիքը, տարբեր մասնագիտության արհեստավորներ, պտղատու ծառերի տնկիներ և ընտանի կենդանիներ: 6 օր ու գիշեր ջուրը ծածկում է ողջ աշխարհը, մարդկությունը ոչնչանում է, փրկվում է միայն Ուտնափիշտիմը: Ի վերջո, տապանը կանգ է առնում բարձր լեռան կատարին, և փրկվածները աստվածներին զոհեր են մատուցում: Աստվածները ներում են փրկվածներին, իսկ Ուտնափիշտիմին ու իր կնոջը շնորհում են անմահություն:

Ուր քաղաքի պեղումները ցույց տվեցին, որ այն ծածկված է 2, 5 մ մաքուր տիղմի շերտով: Այդպիսի մեծ հաստությամբ տիղմ կարող էր բերել միայն ուժեղ հեղեղը: Ամբողջ Հարավային Միջագետքն անցել էր ջրի տակ: Սա հաստատում է սեպագրերի տեղեկությունների հավաստիությունը ջրհեղեղի մասին:

Միջագետքի ժողովուրդների ամենանշանավոր գրական ստեղծագործությունը ***«Գիլգամեշի մասին»*** էպոսն է: Էպոսը ստեղծել են շումերները, հետագայում այն վերամշակվել ու թարգմանվել է աքքադերեն:

Գիլգամեշը և Էնկիդուն սպանում են Խումբաբային

Գիլգամեշի և Էնկիդուի մենամարտը

Էպոսում պատմվում է Ուրուկ քաղաքի արքա Գիլգամեշի և նրա ընկերոջ՝ Էնկիդուի քաջագործությունների մասին: Երբ Էնկիդուն մահանում է, Գիլգամեշը որոշում է վերակենդանացնել ընկերոջը: Նա ուղևորվում է կախարդական «կյանքի խոտը» գտնելու, բայց աստվածները խանգարում են նրան՝ իր նպատակին հասնելու:

Գիլգամեշ

Գիլգամեշը որոնում է անմահության խոտը

4

Աստվածների արձանները քանդակում էին քարից կամ փայտից: Բաբելոնի գլխավոր տաճարում կանգնեցված էր փայտից պատրաստված, ոսկով և թանկարժեք քարերով զարդարված գերագույն աստված ***Մարդուկի*** արձանը: Կրոնական տոների ժամանակ արձանը հանդիսավոր երթով տանում էին քաղաքի փողոցներով:

5

Միջագետքում օգտագործում էին լուսնային օրացույց, ուստի ամիսը ուներ 28 օր: Ժամանակը հաշվելու համար կիրառում էին արևային և ջրային ժամացույցներ, իսկ օրվա ժամերի հաշվարկը սկսում էին կեսգիշերից:

Աստղագիտությունը օգտագործվում էր նաև գուշակության մեջ: Մարդու ծննդյան պահին աստղերի դիրքով գուշակում էին նրա ապագան, հասարակական դիրքը և այլն: Հին Արևելքում բաբելոնյան քրմերը համարվում էին լավագույն աստղագուշակները:



Աշխարհի բաբելոնյան քարտեզը

Ուր քաղաքի Զիկուրատը

Գունավոր աղյուսներով բարձրաքանդակ Բաբելոնի հարավային պալատի գահասրահում

Միջագետքից գտնված գլանաձև կնիքներ, որոնցով ստորագրում էին պայմանագրերը և առևտրական գործարքները: Կնիքը գլորում էին խոնավ կավե տախտակի վրա և ստացվում էր համապատասխան պատկեր-ստորագրություն: